# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Դասվարի» թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 20 դասաժամ), «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 9 դասաժամ), «Քիմիա» առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 13 դասաժամ) տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստային փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարերը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
- Դիմում (Ձև1),
- 1 լուսանկար՝ 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատանքի իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթղեր:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 27-ին՝ ժամը 14:00-ին, « ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ
հասցեն՝ Գեղարքունիքի մարզ գ. Արծվանիստ. Հասցեն 16 Փ. 10/Շ/

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093396373 հեռախոսահամարով: